

է, որ յանդգնարար վստահացար եւ ձեռն արկեր ի մեր սուրբ հաւատոս. զի կամ իս զմեր ուղղափառ հաւատոս խախտել եւ տապալել. եւ զմեզ ի հերձուածողութիւն եւ յուրացութիւն ձգել, Ֆռանդաց հետն միարանելով եւ ձեռագիր տալով, զՔաղկեդոնի ժողովն ընդունելով եւ ի Քրիստոս երկու բնութիւն ասելով կամ իս զմեզ ի ներքոյ այն անիծից մուծանել, զոր ի վերայ Քաղկեդոնականացն է: Զի զայն Գիշու որդի չԶաքարայն, որ Վանայ դօլուաթաւորքն զինքն ի Վարագայ աքսորեալ հաւածեցին... դու զնա ընդունեցեր... եւ ոչ թէ միայն ընդունեցեր զնա, այլ քեզ փոխանորդ կացուցեր եւ նուիրակ կարգեցեր եւ առաքեցեր. զի ուր եւ զնաց՝ ազմկելով եւ խոռովութեամբ ելից զերկիրն:

Մանաւանդ քան զամենայն մեծ չարիքն այս են, որ զքո ձեռագիրն ետուր Փափուն, թէ Ես Մելքիսեթ կաթողիկոս Հայոց, իմ ազգիս վարդապետօք, եպիսկոպոսօք եւ համայն ժողովրդովք հնազանդիմք Հռոմայ եկեղեցւոյն եւ ընդունիմք զժողովն Քաղկեդոնի եւ զտումարն Լեւոնի. եւ նզովեմք զԴէոսկորոս եւ համախոհք նորա. եւ ասեմք ի Քրիստոս երկու բնութիւն եւ երկու կամք: Եւ այս ձեռագրիս օրինակն Փափն գրել է պատմայ գրով եւ յուղարկել է ի Լեհ, նոյնպէս եւ յամենայն տեղիս, թէ Ազգն Հայոց ի մեր հաւատն են դարձեր. այլ եւ ի Վանատիկ եւ յայլ բազում տեղիս գիր է գրեր եւ յղրկեր. եւ այս գրոյս մէկն ի Համիթ է եկեր. եւ զնորա մէկ օրի-